

ՀԱՆԴԷՍ ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ

Կ Ի Զ Ո Յ

Կիզոյի մահուամբ, Գաղղիա քաղաքացէտ ու նշանաւոր պատմագիր մը կորսընցուց: Այս անձը, փրանկիսկոս Պետրոս Գուլիէյմոս Կիզոյ, ծնաւ 1787ին հոկտեմբերի 4ին: Հայրը, կրօնիւք բողոքական, նշանաւոր փաստաբան մ'էր, որ թողուց կեանքը կախաղանին վրայ 1794ին: Այն ատեն Կիզոյ, տակաւին մանուկ հասակաւ, ապահովութեան համար իր մօրը հետ Զուիցերի գնաց, աղատ երկիր ըլլալուն, և հօն ինք Կիզօ լեզուագիտութեան և մասնաւորապէս դպրութեան տուաւ: 1805ին Բարիզ դարձաւ, իրաւագիտութեան ընթացքը կատարելու համար:

Երբ առաջին կայսրութիւնն ընկաւ, Պ. Կիզոյ ընդհանուր քարտուղար աշխատանքաւ ներքին գործոց պաշտօնէին, Մոնթէպալիէօի. բայց երբ Նաբոլէոն վերադարձաւ Էլպա կղզիէն, լաւ համարեցաւ հրաժարիլ այդ պաշտօնէն, և Կանդ գնաց, Լուդովիկոսի ժխի հետ խորհրդակցելու համար:

Պուրպոնեանց հետ Գաղղիա դառնալով, ընդհանուր քարտուղար ընտրուեցաւ արդարութեան Պաշտօնարանին. բայց տեսնալով որ չէր կրնար յաղթել իր հակառակորդացը, հրաժարեցաւ նորէն:

1830ին Յեղափոխութենէն ետքը, մեծ մասն ունեցաւ Միապետութեան ձեռացման ու հաստատութեան մէջ. մտաւ 'ի Պաշտօնարանն, բայց տեսնա-

լով որ իր գաղափարներն չէին միաբաներ Նախագահին գաղափարաց հետ, հարկ դատեցաւ տալ իր հրաժեշտը:

1832ին Պ. Թիէրի ու Պրոյլի հետ Պաշտօնարան մը կազմեց, որ չորս տարի միայն դիմացաւ: Պ. Կիզոյ հասարակաց կրթութեան պաշտօնեայ ըլլալով, մեծ անուն հանեց նախակրթական ուսմանց վրայ օրէնքներ հրատարակելով: Նոյն իսկ արտաքին քաղաքագիտական գործոց մէջ ալ իր կարծիքն մեծ կշիռ ու հեղինակութիւն ունէր:

Երբ 1840ին Պ. Թիէրի իշխանութեան հասաւ, զՊ. Կիզոյ Լոնտոնայի դեսպան անուանեց: Այս միջոցներս ծագեցաւ Արևելեան խնդիրն: Պ. Կիզոյի կարծիքն էր՝ որ Գաղղիա իր բռնած նախկին քաղաքագիտական ճամբէն չի խտտորի. բայց Պ. Թիէրի իրեն չանստալով, Գաղղիա դուրս մնաց Եւրոպական դաշնակցութենէն:

Պ. Թիէրի այս բռնած ընթացքն հրաժարել տուին իրեն պաշտօնէն, և իր տեղն անցաւ Պ. Կիզոյ. դժուարին գործ, վասն զի շատ մը թշնամիներ ունէր: Ինքը արտաքին գործոց պաշտօնեայ եղաւ այս անգամ, և Պաշտօնարանին հոգին էր:

1846ին՝ Հռովմ. օրինակ եղաւ քաղաքական վերանորոգութեանց. միրիկ մ'էր որ կը սպառնար վեր 'ի վայր ընելու ու ձգել իրեն հետ բոլոր ուրիշ տէրութիւններն ալ. բայց Պ. Կիզոյ կըրցաւ առջին առնուլ առ ժամանակ մի:



Կ Ի Ձ Ո Յ

Յեղափոխական գաղափարն սկըսաւ արթըննալ 'ի Գաղղիա, ու զայրացաւ. որով հարկեցաւ Պաշտօնարանն տեղի տալ, և ընկաւ երկրորդ Միապետութիւնն ալ:

Պ. Կիզոյ ապաւինեցաւ 'ի լոնտա. ուր քիչ մը ժամանակ կենալէն ետքը, վերադարձաւ նորէն 'ի Գաղղիա: Ի սկզբան ջանաց նորէն քաղաքագիտական ասպարիզին մէջ մտնալ, բայց չի

յաջողեցաւ. ուստի ինք զինքը բոլորովին ուսման տուաւ, և զանազան գրքքեր հրատարակեց. և բոլոր երկրորդ կայսերութեան ատեն պարզ գրագիտի մը կեանք վարեց:

Պ. Կիզոյ իբրեւ քաղաքագէտ՝ մեծ հեղինակութիւն, և իբրեւ ուսումնական՝ վսեմ ընդու մ'ունէր: Բայց գրուածքներն աւելի ախորժելի ու համոզողական են, քան թէ կորովի: